

**ԵՊՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի 2016թ.-ի գործունեության**

Կայուն զարգացման կենտրոնի կողմից 2016թ.-ի ընթացքում ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի UB 4200673 «TO SUPPORT GOVERNMENT AND CIVIL SOCIETY IN ADDRESSING ENVIRONMENTAL ISSUES» (Աջակցություն Կառավարությանն ու քաղաքացիական հասարակությանը շրջակա միջավայրի խնդիրների լուծման գործընթացներում) ծրագրի շրջանակներում «Խթանել շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության զարգացմանը» (TO CONTRIBUTE TO DEVELOPMENT OF ENVIRONMENTAL POLICIES) թեմայով իրականացված աշխատանքներն ու դրանց արդյունքները ներկայացվում են ըստ հիմնական կետերի:

1. Հաշվետու ժամանակահատվածում հանքարդյունաբերության գծով փորձագետների կողմից իրականացվել է շրջակա միջավայրի պահպանության գործում հանքարդյունաբերությամբ պայմանավորված խնդիրների և դրանց առաջացման հիմնական գործոնների բացահայտում և նրանց հետ կապված ռիսկերի նվազեցման ուղիների մշակում: Ուսումնասիրվել են Օրհուսի և Էսպոյի կոնվենցիաների և միաշարք այլ միջազգային արձանագրությունների պահանջները և ՀՀ պարտավորությունները դրանց նկատմամբ, ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրքն ու ՇՄԱԳՓ օրենքը և դրանց հետ կապված ողջ օրենսդրական դաշտը, որոնց հիման վրա վեր են հանվել հիմնական բացասական կողմերն ու ներկայացվել են առաջարկություններ դրանց լրացման ուղղությամբ:
2. Կենտրոնի կողմից` Հայաստանյան Օրհուս կենտրոնների աջակցությամբ, հանրապետության տարբեր հատվածներում, որոնք անմիջական առնչություն ունեն հանքարդյունաբերության և բնապահպանական լուրջ խնդիրների հետ, իրականացվել է բնապահպանական խնդիրների և դրանց վերաբերյալ իրազեկվածության հարցումներ, որոնց արդյունքներն ամփոփվել են և ներկայացվել են շահագրգիռ կողմերին:
3. Ուրվագծվել է Լոռվա մարզում առկա հանքարդյունաբերական թափոնների ազդեցության գոտին, որի արդյունքում էլ ստացվել է Ալավերդուց մինչև Շնող բնակավայրերն ընկած տարածքի աղտոտման աստիճանների (գոտիների) սխեման:
4. Ուսումնասիրվել է ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի արտադրական պոչերի շրջակա միջավայրի վրա թողնված ազդեցության հիմնախնդիրը: Ստացված տվյալները ցույց են տալիս, որ պոչամբարի շրջակայքում` մինչև 200 մ շառավիղ ընդգրկող մակերեսի վրա, հողում կապարի, կադմիումի, ցինկի և մկնդեղի պարունակությունները շուրջ երեք անգամ գերազանցում են երկրաքիմիական ֆոնը, ինչը չի արձանագրված ընկերության կողմից ներկայացված ՇՄԱԳ-ում: ՇՄԱԳ-երում, շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերության ազդեցության չափի ոչ ճիշտ գնահատելը պայմանավորված է ՀՀ-ում նորմատիվների և հրահանգների բացակայությամբ:

5. Ջրային ռեսուրսների հարցերով փորձագետների կողմից ուսումնասիրվել են առանձին հանքային դաշտերի (Սյունիքի, Լոռիի մարզեր) ստորգետնյա և մակերևութային ջրերի ախտոտման աղբյուրները և այդ ախտոտման հետևանքով առաջացած բնապահպանական խնդիրները՝ կապված գյուղմթերքների ախտոտվածության հետ: Վերցվել են ջրային նմուշներ ինչպես շահագործվող հանքավայրերի տարածքում առկա ջրային աղբյուրներից, այնպես էլ դրանից դուրս եկող և գետային ջրային հոսքը ձևավորող հատվածներից: Կենտրոնի փորձագետների կողմից կատարվել է Սյունիքի մարզի Ողջի և Մեղրի գետերի ավազանի աղտոտվածության ուսումնասիրում, ջրի նմուշների հավաքագրում՝ հետագա լաբորատոր վերլուծությունների ենթարկելու նպատակով:

### ***Քննարկումներ***

1. Ս.թ. մայիսի 19-ին կենտրոնի կողմից կազմակերպված կլոր սեղանի ժամանակ առաջին հերթին քննարկվեցին կենտրոնի ծրագրերը և անելիքները, այնուհետև եղավ ESPO և «ՌԻՈ+20» կոնվենցիաների պահանջների քննարկում, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՇՄԱԳ) ՀՀ օրենքի առանձին կետերի քննարկում, որը վերաբերվում է գնահատման մեթոդաբանությանը: Հանդիպմանը կենտրոնի փորձագետներից բացի, ներկա էին նաև ԵԱՀԿ երևանյան գրասենյակի Շրջակա միջավայրի հարցերով ազգային ծրագրերի պատասխանատու Գ. Ղազինյանը, «Տնտեսաիրավական վերլուծությունների կենտրոն» ՀԿ-ի իրավաբան-փորձագետներ, անհատ իրավաբան-փորձագետներ, հայաստանյան Օրիուս կենտրոնների ներկայացուցիչներ:
2. Հերթական քննարկումը կենտրոնի կողմից կազմակերպվեց հունիսի 1-ին: Հանդիպման մասնակիցների շրջանակը կրկին նույնն էր, քննարկման թեման էր ՀՀ Լոռու մարզում շրջակա միջավայրի վրա ազդեցության և նրա գնահատման վերաբերյալ սոցիալական հարցում անցկացնելու, վերջինիս հարցերի շրջանակների պարզաբանումն ու նպատակների քննարկումը:
3. Կենտրոնի հաջորդ կլոր սեղանը կազմակերպվեց ս.թ. հունիսի 9-ին, որը նվիրված էր հանքարդյունաբերական և փոքր ՀԷԿ-երի գործունեությամբ պայմանավորված բնապահպանական հիմնախնդիրների քննարկմանը, ինչպես նաև Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ Օրենքի բարելավմանն ուղղված հարցերին: Քննարկմանը մասնակցում էին նաև ՀՀ Բնապահպանության նախարարության Բնապահպանական պետական տեսչության, Ընդերքի և հողերի պահպանության քաղաքականության վարչության պետերը, ավագ տեսուչներ, գլխավոր մասնագետներ: Հանդիպմանը նախարարության ներկայացուցիչների հետ քննարկվեց և կարևորվեց ՀՀ Լոռվա մարզում բնապահպանական խնդիրների վերհանման և ՇՄԱԳՓ Օրենքի գործունեության արդյունավետության, իրազեկվածության վերաբերյալ սոցիալաբան իրականացնելու նպատակահարմարությունը, նպատակներն ու հարցադրումները: Հանդիպման արդյունքում նախ քննարկվեց ու համաձայնացվեց հարցաթերթիկը, այնուհետև որոշվեց դիմել ՀՀ բնապահպանության նախարարին՝ հայտնելով Կայուն զարգացման կենտրոնի և նախարարության համատեղ ուժերով

Օրենքում առկա թերությունների և հակասությունների վերացման աշխատանքներն համատեղ իրականացնելու պատրաստակամության մասին:

*Ս.թ. հունիսի 27-ին ՀՀ բնապահպանության նախարար պարոն Ա. Գրիգորյանին կենտրոնի կողմից ուղղվել է համապատասխան նամակ, որտեղ նշվել է, որ ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին, թվում է թե պետք է ամբողջովին լուծեր այս ոլորտում առկա խնդիրները, այդ թվում նաև համապատասխանեցման բերեր դաշտում առկա որոշումների կայացման գործընթացներն Օրհուսի և Էսպոյի Կոնվենցիաների հետ, այնուամենայնիվ Կենտրոնում իրականացված ուսումնասիրությունների և հանքային ու ջրային ռեսուրսների արդյունահանման, օգտագործման թույլտվությունների տրամադրման ընթացքում իրականացվող հաշվետվությունների և վերջիններիս փորձաքննությունների եզրակացությունների դիտարկումների արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ ՇՄԱԳՓ օրենսդրական դաշտում առկա բացթողումների վերաբերյալ, վերջիններս հատկապես վերաբերվում են տարբեր տիպի գնահատումների իրականացման մեթոդաբանությունների բացակայությանը, և քանի որ Կենտրոնի նպատակներից է աջակցել ՀՀ Կառավարությանը միջազգային պարտավորությունների շրջանակներում շրջակա միջավայրի անվտանգության, կայունության քաղաքականության հարցերի մշակման և արդյունավետ իրականացման գործում, ուստի կարևորում ենք Ձեր ղեկավարած նախարարության համապատասխան բաժինների հետ համագործակցել նշված խնդիրների լուծման ուղղությամբ:*

4. Կայուն զարգացման կենտրոնի ընթացիկ տարվա ծրագրով նախատեսված աշխատանքների ավարտն ամփոփվեց ղեկտեմբերի 12-ին Անի հյուրանոցում կազմակերպված աշխատաժողովի կազմակերպմամբ՝ ՀՀ բնապահպանության նախարարության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ համատեղ: Աշխատաժողովի թեման էր «Էկոլոգիական քաղաքականության բարելավման և կանաչ տնտեսության զարգացման խնդիրները հանքային և ջրային ռեսուրսների շահագործման ոլորտում»: Միջոցառմանը ներկա տարբեր շահագրգիռ կողմերի հետ քննարկվեցին էկոլոգիական քաղաքականության մշակման հիմնական դրույթները և դրա դերը կանաչ տնտեսության զարգացման գործում: Աշխատաժողովին իրենց ողջոյնի խոսքով հանդես եկան ՀՀ ԲՆ Ա. Մինասյանը և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Ա. Ավակովը: Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ Բնապահպանության, առողջապահության, արտակարգ իրավիճակների, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական ռեսուրսների նախարարությունների, հասարակական կազմակերպությունների, հայաստանյան Օրհուս կենտրոնների, ՀՀ ԲՈՒՀ-երի և գիտական կազմակերպությունների աշխատակիցներ, ներկայացուցիչներ, ուսանողներ և ուրիշներ:

### ***Արդյունքներ և առաջարկություններ***

1. Շրջակա միջավայրի աղտոտման հիմնական աղբյուրներից է հանքարդյունաբերությունը, որն անմիջական ազդեցություն է ունենում երեք տարբերի վրա՝ օդ, ջուր և հող, դրանից էլ աղտոտումը շրթայական կապով անցնում է բուսականություն, կենդանական աշխարհ և մարդու օրգանիզմ, ազդելով մարդու առողջության վրա: Աղտոտումները հիմնականում

սկսվում են հանքի բացումից, հանքաքարի արդյունահանումից, հարստացմանը նախապատրաստման պրոցեսներից՝ ջարդում, կոտրատում, մանրացում, այնուհետև անցնելով վերամշակման փուլը, վերամշակման թափոններից դեպի ջրային ավազաններ (ներծծում) տանելով հարստացման պրոցեսում օգտագործվող թունավոր նյութերն ու տարալուծված ծանր մետաղներն ու կարծր մասնիկները մթնոլորտ (փոշի):

Լեռնահանքային արդյունաբերության հիմնական խնդիրները կապված են լեռնային զանգվածների մեծ ծավալների տեղափոխման, հանքաքարերի վերամշակման և դրանց հետևանքով առաջացած մեծածավալ թափոնների հետ: Վերջիններս պարունակելով սուլֆիդային հանքայնացում, ժամանակի ընթացքում քայքայվելով դառնում են չափազանց վտանգավոր շրջակա միջավայրի համար:

Դրա հետ մեկտեղ ոլորտը չափազանց մեծ քանակությամբ օգտագործում է տեխնիկական ջուր, որն իր հերթին ակտիվացնում է վտանգավոր ազդեցության աստիճանը ՇՄ-ի վրա՝ մեծացնելով վտանգավոր նյութերի հոսքը: Ջրային ռեսուրսների մեծածավալ օգտագործումն այս գործընթացներում բերում է ջրային ռեսուրսների կտրուկ նվազմանն ու խոչընդոտում է դրա հետ կապված այլ ոլորտների զարգացման աճին: Այն բերում է մակերևութային և ստորգետնյա ջրային ավազանների մակարդակների և ջրի որակի փոփոխմանը:

Հանքավայրերի շահագործումն իր էական ազդեցությունն է ունենում մթնոլորտի վրա, որի հետևանքով անմիջականորեն տուժվում են ֆլորան ու ֆաունան և մարդը: Փոշու տարածումը շրջակա միջավայրում և նրա միացումը ջրի հետ կրկին ակտիվացնում է վտանգավոր տարրերի ներթափանցման և ազդեցության աստիճանը՝ շղթայական անցումով կենդանիների և մարդու օրգանիզմ:

**Առաջարկվում է** վերանայել Ընդերքի մասին օրենսգիրքը և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքը, դրանց հետ կապված կարգերն ու այլ իրավական փաստադրթերը, վերջիններումս հստակեցնելու և սահմանելու ՇՄԱԳ մեթոդաբանությունները՝ օդի, հողի, ջրի, կենդանական և բուսական աշխարհի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման մեխանիզմները:

Հաշվի առնելով ջրի կենսական և տնտեսական նշանակությունները, կտրուկ ավելացնել արդյունաբերության նպատակներով օգտագործվող ջրի սակագինը և վերանայել՝ խստացնել վարչական իրավախախտումների մասին օրենքով ջրի աղտոտման նկատմամբ պանահջներն ու մեծացնել տուգանքների չափերը, սահմանել արդյունաբերական

տարածքներից արտանետվող ջրերի սանիտարական նորմերը և ջրի որակական կազմի պահանջները, շրջանառու ջրի համակարգի ստեղծման և կիրառման պահանջները:

Նշվածների կիրառումը միանշանակ դրական ազդեցություն կունենա կանաչ տնտեսության զարգացման վրա և կնպաստի շրջակա միջավայրի պահպանությանը:

2. Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունները ցույց են տալիս հանքարդյունաբերական գործունեության բարելավման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում հանքարդյունաբերական ռիսկերի ապահովագրության, հանքերի փակման ծրագրերի և դրանց իրականացման համար բնապահպանական գրավի տեսքով անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության առաջնահերթ պայմանը հանքի շահագործման թույլտվության ստացման համար: Այս փորձը նույնպես պետք է ներդնել ՀՀ-ում, որը կնպաստի ռիսկերի ճիշտ գնահատմանը և վտանգավոր երևույթների հետևանքների վերացման ապահովությանն ու դրանց վնասակար ազդեցության նվազեցմանը:

**Առաջարկվում է** հանքի շահագործման թույլտվության տրամադրման հիմքում օրենքով սահմանել ապահովագրական գրավի գաղափարը, որն անհրաժեշտ կլինի օգտագործել շրջակա միջավայրին հասցված վնասների օպերատիվ վերացման և ազդեցության նվազեցման համար:

Հանքի փակման ծրագրի և դրան համապատասխան ֆինանսական միջոցների երաշխիքը հանդիսանում է ներկայումս գործող Դրամագլուխը, սակայն վերջինումս կուտակվող միջոցները չեն համապատասխանում իրական պահանջվող գումարներին և տասնյակ անգամ պակաս են դրանից: Հիմնական պատճառը նրանում է, որ փակման ծրագիրը և պահանջվող միջոցների ծավալը որոշում է ընդերքօգտագործողն իր սուբեկտիվ մոտեցմամբ, որը տանում է այդ ծավալների նվազեցմանը:

**Առաջարկում ենք**, կիրառելով լավագույն փորձը, փակման ծրագրի ֆինանսական գնահատումն իրականացնել անկախ մասնագիտացված կազմակերպության կողմից:

3. Հանքարդյունաբերության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ոլորտում օրենսդրական դաշտի՝ Ընդերքի մասին օրենսգրքի և ՇՄԱԳՓ օերենքի առանձին հոդվածների միջև, վերլուծության արդյունքում վեր հանված բացթողումները և հակասությունները, ինչպես նաև վերջիններիս դրույթների համեմատումը ՀՀ միջազգային պարտավորությունների հետ՝ Էսպոյի և Օրհուսի կոնվենցիաների և մի շարք այլ արձանագրությունների շրջանակներում, վկայում են օրենսդրական դաշտի բարելավման անհրաժեշտության մասին:

**Առաջարկվում է** մշակել ՇՄԱԳ հստակ մեթոդաբանություններ, այդ թվում նաև մարդու առողջության գնահատման նպատակով: Շրջակա միջավայրի բաղադրիչների շարքում պարտադիր ներառել ընդերքի ռեսուրսներն ու մարդու առողջությունը, ինչպես դա սահմանված է ՇՄԱԳՓ Օրենքով:

Հանրության տեղեկատվության մատչելիության և մասնակցությանը որոշումների կայացմանը ապահովել հանքավայրերի արդյունահանման կամ այդ նպատակով ուսումնասիրությունների կատարման թույլտվությունների տրամադրման ամբողջական գործընթացին, այլ ոչ թե միայն ՇՄԱԳՓ-ին:

Վերանայել փորձաքննության անցկացման կարգում սահմանված հանրության կողմից առաջարկությունների ներկայացման ժամկետները՝ վերջիններիս ավելացման ուղղությամբ:

ՇՄԱԳ փորձաքննությունն իրականացնել ամբողջական համալիրով և բազմապրոֆիլ, դրա համար օրենսդրական դաշտում կատարելով անհրաժեշտ փոփոխություններ:

Հանրության և պետական մարմինների համար իրականացնել ինստիտուցիոնալ զարգացման ծրագրեր, բարցրացնել հանքային ռեսուրսների ուսումնասիրման, գնահատման և արդյունահանման, դրանցով պայմանավորված ՇՄԱ ու ՇՄՊ հիմնական խնդիրների վերաբերյալ գիտելիքների մակարդակը:

Էկոլոգիական քաղաքականության մշակման հիմքում ներառել հանրության էկոլոգիական կրթության և դաստիարակության հարցերը:

4. Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում հիմնական խնդիրները պայմանավորված են ջրի տնտեսական արժեքի ոչ ճիշտ գնահատման, մատակարարման համակարգի ոչ բավարար մակարդակի և կորուստների չհիմնավորված աստիճանի, ջրի որակի աղտոտման և դրա դիմաց ցածր տուգանքների կիրառման հետ:

Կանաչ տնտեսության զարգացման և էկոլոգիական քաղաքականության բարելավման ուղղությամբ ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում կատարված աշխատանքների արդյունքում վեր են հանվել այն հիմնական խնդիրները, որոնք բերում են ջրային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործմանը և խոչընդոտում են կանաչ տնտեսության սկզբունքների ներդրմանն ու իրականացմանը գյուղատնտեսության ոլորտում: Տրվել են առաջարկություններ կանաչ տնտեսության և էկոլոգիական քաղաքականության միաժամանակյա իրականացման անհրաժեշտության վերաբերյալ, ինչը կնպաստի կայուն զարգացմանն ու աղքատության նվազեցմանը:

**Առաջարկվում է** գյուղատնտեսական նպատակներով հատկացվող ոռոգման ջուրը դարձնել անվճար, գյուղատնտեսությամբ զբաղվողներին տրամադրել բույսերի մշակման ուղեցույցներ հատկացվող ոռոգման ջրի որակի և քանակի, կիրառվող թունաքիմիկատների, նրանց օգտագործման պարբերականության և քանակի, առաջարկվող պարարտանյութերի տեսակների և օգտագործման չափականակների վերաբերյալ:

Ուսումնասիրվել են Արարատյան արտեզյան ավազանի դինամիկ պաշարների հիման վրա ձկնային տնտեսության զարգացման ոչ արդյունավետ լինելը՝ հատկապես կանաչ տնտեսության և էկոլոգիական քաղաքականության իրականացման տեսակետից: Նշված քաղաքականության բացակայությունը սպառնալիք է ստեղծում Արարատյան արտեզյան ավազանի պաշարների պահպանման ուղղությամբ, հատկապես ջրի որակի պահպանման տեսակետից, որը արտահայտվում է քաղցրահամր ջրի հանքայնացման բարձրացմամբ, ինչպես նաև քիմիական կազմի փոփոխությամբ:

Վեր է հանվել ՓՀԷԿ-երի կառուցման և շահագործման բնագավառում կանաչ տնտեսության և էկոլոգիական քաղաքականության մշակման հնարավորությունները:

5. Ողջի, Մեղրի և Կարճևան գետերի ջրային ավազանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջիններս գտնվում են անմխիթար վիճակում պայմանավորված թե հանքարդյունաբերության հետևանքներով, թե ՓՀԷԿ կառուցմամբ: Ողջի գետի ավազանը Լեռնաձորից Կապան ընկած հատվածքում ջրազրկված է, իսկ Կապանի օդանավակայանի տարածքից ներքև, Նորաշենիկ վտակի հետ միախառնումից հետո անբողջությամբ ներկայացված Քաջարանի կոմբինատի պոչանքներով՝ դեպքի Արծվանիկ գնացող պոչատարից բաց թողնված պոչերով: Գետի աղտոտմանը նպաստում են նաև Կապանի և Շահումյանի հանքավայրի հանքերից ջրային ավազան լցվող թթվային ջրերը: Կարճևան գետը սկսած Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի տարածքից ամբողջությամբ ներկայացված է վերամշակման պոչերով՝ գետը վերածված է փոչատարի, Ագարակ քաղաքում ստեղծելով շրջակա միջավայրի անմխիթար վիճակ:
6. Անհրաժեշտ է կազմավորել բաց տնտեսական համակարգեր, ինչը թույլ կտա հասնելու տնտեսական աճի և դրական ազդեցության հասարակության բոլոր անդամների համար: Վերջինս կնպաստի աղքատության վերացմանն ու կայուն զարգացման գաղափարների իրագործմանը՝ հասարակության խավերի միջև առկա տարբերության նվազեցմանը: Ընդերքօգտագործողների կողմից համայնքներին տրամադրվող սոցիալական աջակցությունների և էկոհամակարգային ծառայությունների վճարումների չափի ավելացումներն անհրաժեշտ պայման են հանդիսանում վերը նշված խնդիրների լուծման համար:

Ուսումնասիրության արդյունքները և արված առաջարկությունները ներկայացվելու են ՀՀ կառավարությանը Ընդերքի մասին և Էկոլոգիական քաղաքականությունների մշակման հիմքերում ընդգրկելու նպատակով:

Ներկայացված ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման ձևավորված առաջարկությունների կիրառումը կնպաստի ՀՀ-ում օրենսդրական դաշտի բարելավմանը, Էսպոյի՝ ՇՄ ազդեցության գնահատման և Օրհուսի՝ ՇՄ վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացման գործընթացներում հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության Կոնվենցիաների և ՇՄԱԳ Ռազմավարական Էկոլոգիական գնահատման մասին արձանագրության պահանջների և Հայաստանի ստանձնած պարտավորությունների, ՄԱԿ-ի Կայուն զարգացման սկզբունքների իրականացմանը: Ընդերքի մասին օրենսգրքի փոփոխություններն արված առաջարկությունների շրջանակում կնպաստեն հանրության մասնակցության և տեղեկատվության մատչելիության բարձրացմանը: